



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Թաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » *Փետրվար* 2023 թվական N 1936 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ
ԷՌՆԵՍ ՄԱՐՏԻՆԻ ԳԱՐՈՅԱՆԻՆ, ՄԱՐՏԻՆ ԷՌՆԵՍԻ ԳԱՐՈՅԱՆԻՆ,
ՆՈՐԱՅՐ ԷՌՆԵՍԻ ԳԱՐՈՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Էռնեստ Մարտինի Գաբոյանը (անձնագիր՝ AT 0400898 տրված՝ 02.03.2020թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Ն.Շնորհալու փող. 19 շենք 28 բնակարան հասցեում), (այսուհետ՝ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի հունիսի 6-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Ն.Շնորհալու փողոց 19 շենք թիվ 28 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 13-ի Շ-683 գրությունը, 2023 թվականի մայիսի 16-ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N 8/63-432 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի հունիսի 20-ի տեղեկանքը, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մայիսի 2-ի տեղեկանքը, Նազելի Սահակի Շախնազարյանի նույնականացման քարտի, Էռնեստ Մարտինի Գաբոյանի անձնագրի, Մարտին Էռնեստի Գաբոյանի, Նորայր Էռնեստի Գաբոյանի ծննդյան վկայականների պատճենները, «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի հունիսի 27-ի տեղեկանքը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հունիսի 6-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 1-ը, դիմումատուն պատշաճ

կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Էոնեստ Մարտինի Գաբոյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ն.Շնորհալու փողոց 19 շենք, թիվ 28 հասցեի 64.66 (վաթսուհորս ամբողջ վաթսուվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 16062023-08-0042 վկայական):

բ) Լենինականի Ն. Շնորհալի փողոց 19 շենք (կառուցված 1936թ.) թիվ 28 բնակարանի հատկացման հիմքերի վերաբերյալ տվյալներ չեն հայտնաբերվել (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 13 - ի Շ-683 գրություն):

գ) Քաղաք Գյումրի Ն. Շնորհալի փողոց 19 շենք 28 հասցեում հաշվառված են՝ Մարտին Էոնեստի Գաբոյանը 2017 թվականից, Էոնեստ Մարտինի Գաբոյանը 2014 թվականից, Նազելի Սահակի Շախնազարյանը 2014 թվականից, Նորայր Էոնեստի Գաբոյանը 2019 թվականից (հիմք՝ 2023 թվականի մայիսի 16-ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N 8/63-432 գրություն և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի հունիսի 20-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Մարտին Էոնեստի Գաբոյանի, Էոնեստ Մարտինի Գաբոյանի, Նորայր Էոնեստի Գաբոյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր նրանց կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Նազելի Սահակի Շախնազարյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր նրա կողմից կնքված օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ Գյումրի քաղաք Կամոյի փողոց 73 շենք 47 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի ապրիլի 28-ի N ԱՏ-28042023-99-0189, N ԱՏ-28042023-99-0451, N ԱՏ-28042023-99-0184 տեղեկանքներ):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ն.Շնորհալի փողոց 19 շենք թիվ 28 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար, այն է՝ պահանջվում է կատարել շենքի հարդարանքի նորոգում՝ վնասված տարրերի վերականգնումով (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մայիսի 2-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Էոնեստ Գաբոյանը /ք. Գյումրի, Ներսես Շնորհալի փողոց 19 շենք, 28 բն./ Գյումրի ցանցում բաժանորդ է 2002 թվականից միջև օրս (հիմք՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ուրս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի հունիսի 27-ի տեղեկանք):

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել

ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Քաղաքի Նազեի Սահակի Շախնազարյանի կողմից 1998թ. մարտի 1-ից առ այսօր կնքված օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ Գյումրի քաղաք Կամոյի փողոց 73 շենք 47 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական վարույթը քաղաքացի էռնեստ Մարտինի Գաբրյանի դիմումը բավարարեց մասամբ:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ն.Շնորհալու փողոց 19 շենք, թիվ 28 հասցեի 64.66 (վաթսունչորս ամբողջ վաթսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

- | | |
|-----------------------------|-----------------------|
| 1) Էռնեստ Մարտինի Գաբոյանին | ծնված՝ 1993 թվականին, |
| 2) Մարտին Էռնեստի Գաբոյանին | ծնված՝ 2017 թվականին, |
| 3) Նորայր Էռնեստի Գաբոյանին | ծնված՝ 2019 թվականին |

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Էռնեստ Մարտինի Գաբոյանին, Մարտին Էռնեստի Գաբոյանին, Նորայր Էռնեստի Գաբոյանին:

3. Քաղաքացիներ Էռնեստ Մարտինի Գաբոյանին, Մարտին Էռնեստի Գաբոյանին, Նորայր Էռնեստի Գաբոյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Էռնեստ Մարտինի Գաբոյանին, Մարտին Էռնեստի Գաբոյանին, Նորայր Էռնեստի Գաբոյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2023թիվ Գյումրի համայնք



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
 Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
 էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » օգոստոսի 2023 թվական N 1935-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ
 ՍՈՒՍԱՆՆԱ ԼԻՊԱՐԻՏԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
 ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սուսաննա Լիպարիտի Ղազարյանը (անձնագիր՝ AV 0385358, տրված՝ 18.08.2022թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Մատնիշյան փող. 53 շենք 4 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի հուլիսի 28-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մատնիշյան փողոց 53 շենք թիվ 4 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իրեն որպես սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի հունիսի 5 -ի գրությունը, 2023 թվականի հուլիսի 28-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ թիվ 23065065196 տեղեկանքը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի հուլիսի 27-ի տեղեկանքը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 14-ի եզրակացությունը, Սուսաննա Լիպարիտի Ղազարյանի անձնագրի պատճենը, Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 12-ի թիվ 1737-Ա հասցեավորման որոշումը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հուլիսի 28-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Սուսաննա Լիպարիտի Ղազարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ս.Մատնիշյան փողոց 53 շենք, թիվ 4/1 հասցեի 39 (երեսունինը ամբողջ) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 24072023-08-0019 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Ս. Մատնիշյան փողոցի թիվ 53 շենքի /կառուցված 1948թ./ թիվ 4 բնակարանի բաշխման նյութերը չեն պահպանվել (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի հունիսի 5-ի գրություն):

գ) Գյումրի համայնքին պատկանող Գյումրի քաղաք, Մատնիշյան փողոց, 53 շենք, 4 հասցեագրությամբ հաշվառված բնակարանին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրվել է հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ս. Մատնիշյան փողոց, 53 շենք, 4/1 բնակարան (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 12-ի թիվ 1737-Ա հասցեավորման որոշում):

դ) Շիրակ Գյումրի, Մատնիշյան փ. 53 շենք 4 հասցեում հաշվառված բնակվում է Սուսաննա Լիպարիտի Ղազարյանը 1979 թվականից (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 28-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ թիվ 23065065196 տեղեկանք, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2023 թվականի հուլիսի 27-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Սուսաննա Լիպարիտի Ղազարյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի մարտի 27-ի N US-27032023-99-0421 տեղեկանք):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս.Մատնիշյան փողոց 53 շենքի ընդհանուր վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի: Շենքի կրող համակարգը գտնվում է բավարար վիճակում: Շենքի առաջին հարկում գտնվող թիվ 4 հասցեով բնակարանը պիտանի է շահագործման համար (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 14-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Սուսաննա Լիպարիտի Ղազարյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ձանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու

իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական վարույթը քաղաքացի Սուսաննա Լիպարիտի Ղազարյանի դիմումը բավարարեց:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ա.Մատնիշյան փողոց 53 շենք, թիվ 4/1 հասցեի 39 (երեսունինը ամբողջ) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Սուսաննա Լիպարիտի Ղազարյանին ծնված՝ 1957 թվականին որպես սեփականություն:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Սուսաննա Լիպարիտի Ղազարյանին:

3. Քաղաքացի՝ Սուսաննա Լիպարիտի Ղազարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սուսաննա Լիպարիտի Ղազարյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչականակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2023թ. ք. Գյումրի



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » *Օգոստոս* 2023 թվական N 1934-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ
ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ԱՇՈՏԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ ԱՇՈՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ,
ՆԵԼԼԻ ԱՇՈՏԻ ՏԵՓԱՆՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանը (անձնագիր՝ AP 0632235, տրված՝ 22.11.2016թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի Անի թաղ. 7փող.8շենք, 46 հասցեում), (այսուհետ՝ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի հուլիսի 26-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Ա.հաչատրյան 31 շենք թիվ 79 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 12 որոշմամբ Ա.հաչատրյան 31 շենք 79 բնակարանը հատկացվել է Այոշա Մկրտիչի Հովհաննիսյանի յոթ անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային, հարսին, երեք թոռանը և տրվել թիվ 79 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 12 որոշմամբ տրված թիվ 79 միասնական օրդերը, Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի հուլիսի 8-ի N 8/63-560 գրությունը, «Գարուն» համատիրության 2023 թվականի հուլիսի 25-ի N 241 տեղեկանքը, Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանի, Նելլի Աշոտի Տեփանոսյանի, Մարինե Աշոտի Հովհաննիսյանի անձնագրերի պատճենները, Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանի լիազորագիրը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հուլիսի 26-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով

ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ա.Խաչատրյան փողոց 31 շենք թիվ 79 հասցեի 97.25 (իննսունյոթ ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 24072023-08-0049 վկայական):

բ) Գյումրի համայնքի Ա.Խաչատրյան 31 շենք թիվ 79 հասցեի բնակարանը 1991 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 12 որոշում):

գ) Գյումրի քաղաքի Ա.Խաչատրյան 31 շենք 79 հասցեում հաշվառված փաստացի բնակվում են Թամարա Մանասերի Ասատրյանը 2023 թվականից, Վահե Գարեգինի Համբարյանը 2023 թվականից, Մանե Գարեգինի Համբարյանը 2023 թվականից, Մարկ Գարեգինի Համբարյանը 2023 թվականից, Գարեգին Վարդգեսի Համբարյանը 2023 թվականից (հիմք՝ 2023 թվականի հուլիսի 8-ի Գյումրի քաղաքի անձնագրային խմբի N 8/63-560 գրություն և «Գարուն» համատիրության 2023 թվականի հուլիսի 25-ի N 241 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Նելլի Աշոտի Ստեփանյանի, Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանի, Մարինե Աշոտի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հուլիսի 3-ի N ԱՏ-03072023-99-0244, N ԱՏ-03072023-99-0243, N ԱՏ-02072023-99-0420 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Ա.Խաչատրյան փողոց 31 շենք թիվ 79 հասցեի բնակարանը վարձակալել է 1991 թվականի սեպտեմբերի 23-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրքը) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու

առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ա.Խաչատրյան փողոց 31 շենք թիվ 79 հասցեի 97.25 (իննսունյոթ ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանին

ծնված՝ 1986 թվականին,

2) Մարինե Աշոտի Հովհաննիսյանին

ծնված՝ 1979 թվականին,

3) Նելլի Աշոտի Տեփանոսյանին

ծնված՝ 1982 թվականին

որպես համատեղ ընդհանուր սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանին, Մարինե Աշոտի Հովհաննիսյանին, Նելլի Աշոտի Տեփանոսյանին:

3. Քաղաքացիներ՝ Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանին, Մարինե Աշոտի Հովհաննիսյանին, Նելլի Աշոտի Տեփանոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Տիգրանուհի Աշոտի Սուքիասյանին, Մարինե Աշոտի Հովհաննիսյանին, Նելլի Աշոտի Տեփանոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2023թ. ք. Գյումրի



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » Օգոստոսի 2023 թվական N 1933-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ
ՍԵՐԳՈ ՊԵՏՐՈՎԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ՎՈԼՈՂՅԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ,
ԱՍՅԱ ՍԵՐԳՈՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ, ԱՐՄԵՆ ՍԵՐԳՈՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ,
ԱԼԻՆԱ ՍԵՐԳՈՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Իրինա Արամայիսի Եղիազարյանը (անձնագիր՝ AP 0505308 տրված՝ 16.07.2016թ. 064-ի կողմից, հաշվառված՝ Խր.Հայրիկ խճ.Սիմոֆոր 21շենք, 12 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Արմեն Սերգոյի Ավետիսյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատերեր), 2023 թվականի հունիսի 11-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Երևանյան խճուղի 157ա շենք թիվ 35 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 751 որոշմամբ Երևանյան խճուղի 157ա շենքի թիվ 35 բնակարանը հատկացվել է Պետրոս Հարությունի Ավետիսյանի ութ անձից բաղկացած ընտանիքին (իրեն, կնոջը, տղային, հարսին, 4 թոռանը):

Քաղաքացիներ՝ Պետրոս Հարությունի Ավետիսյանը և Ասյա Համբարձումի Մուրադյանը մահացել են (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված չլինելու վերաբերյալ N 220651065424, N 220651065425 տեղեկանքներ):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 751 որոշումը, 2022թվականի հուլիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 220651065426 տեղեկանքը, «Երևանյան 157ա» համատիրության 2023 թվականի հուլիսի 6-ի տեղեկանքը, Աիդա Սերգոյի Ավետիսյանի անձնագրի պատճենը, Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 25-ի թիվ 1038-Ա որոշումը, Արմեն Սերգոյի Ավետիսյանի, Ալինա Սերգոյի Ավետիսյանի, Անահիտ Վոլոդյայի Ավետիսյանի, Սերգո Պետրովի Ավետիսյանի, Ասյա Սերգոյի Ավետիսյանի լիազորագրերը Գյումրի համայնքից Երևանյան խճուղի 157ա շենքի թիվ 35 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հունիսի 11-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել են լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Արմեն Սերգոյի Ավետիսյանի լիազորված անձ՝ Իրինա Արամայիսի Եղիազարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Երևանյան խճուղի 157ա շենք թիվ 35 հասցեի 63.49 (վաթսուներեք ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 16062023-08-0049 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 157ա շենք թիվ 35 հասցեի բնակարանը 1998 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 1998 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 751 որոշում):

գ) Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 157Ա շենք թիվ 35 հասցեի բնակարանում հաշվառված բնակվում է Արմեն Սերգոյի Ավետիսյանը 2015 թվականից, (հիմք՝ 2022 թվականի հունիսի 22-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 220651065426, «Երևանյան 157ա» համատիրության 2023 թվականի հունիսի 6-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Ալինա Սերգոյի Ավետիսյանի, Ասյա Սերգոյի Ավետիսյանի, Անահիտ Վոլոդիայի Ավետիսյանի, Արմեն Սերգոյի Ավետիսյանի, Սերգո Պետրովի Ավետիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ: Քաղաքացի Աիդա Սերգոյի Ավետիսյանի անվամբ Շիրակի մարզ ք.Գյումրի Հովսեփյան փողոց թիվ 5/7 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: Նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է Շիրակի մարզ ք.Գյումրի Հովսեփյան փողոց թիվ 5/7 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2023 թվականի հունիսի 13-ի N ԱՏ-13062023-99-0360 տեղեկանք):

ե) Քաղաքացի Արմեն Սերգոյի Ավետիսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի 157ա շենք թիվ 35 հասցեի բնակարանը վարձակալել է 1998 թվականի դեկտեմբերի 21-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը

վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առջինն է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝

նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի Աիդա Սերգոյի Ավետիսյանի անվամբ Շիրակի մարզ ք.Գյումրի Հովսեփյան փողոց թիվ 5/7 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: Նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է Շիրակի մարզ ք.Գյումրի Հովսեփյան փողոց թիվ 5/7 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Արմեն Սերգոյի Ավետիսյանի լիազորված անձ՝ Իրինա Արամայիսի Եղիազարյանի դիմումը բավարարեց մասամբ:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Երևանյան խճուղի 157ա շենք թիվ 35 հասցեի 63.49 (վաթսուներեք ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

- | | |
|---------------------------------|-----------------------|
| 1) Սերգո Պետրովի Ավետիսյանին | ծնված՝ 1959 թվականին, |
| 2) Անահիտ Վոլոդյայի Ավետիսյանին | ծնված՝ 1957 թվականին |
| 3) Ասյա Սերգոյի Ավետիսյանին | ծնված՝ 1986 թվականին |
| 4) Արմեն Սերգոյի Ավետիսյանին | ծնված՝ 1992 թվականին |
| 5) Ալինա Սերգոյի Ավետիսյանին | ծնված՝ 1984 թվականին |

որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Սերգո Պետրովի Ավետիսյանին, Անահիտ Վոլոդյայի Ավետիսյանին, Ասյա Սերգոյի Ավետիսյանին, Արմեն Սերգոյի Ավետիսյանին, Ալինա Սերգոյի Ավետիսյանին:
3. Քաղաքացիներ՝ Սերգո Պետրովի Ավետիսյանին, Անահիտ Վոլոդյայի Ավետիսյանին, Ասյա Սերգոյի Ավետիսյանին, Արմեն Սերգոյի Ավետիսյանին, Ալինա Սերգոյի Ավետիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Սերգո Պետրովի Ավետիսյանին, Անահիտ Վոլոդյայի Ավետիսյանին, Ասյա Սերգոյի Ավետիսյանին, Արմեն Սերգոյի Ավետիսյանին, Ալինա Սերգոյի Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » *օգոստոս* 2023 թվական N 1938-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐՄԵՆԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱԴՈՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Էմմա Վաղինակի Վարդանյանը (անձնագիր՝ AN 0702909, տրված՝ 06.11.2013թ., 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Ա.Վասիլյան փողոց թիվ 15 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Արմենակ Հովհաննեսի Մադոյանի և Գագիկ Հովհաննեսի Մադոյանի անունից, (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի հուլիսի 20-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Չարենցի փողոց 7ա շենք թիվ 7 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Արմենակ Հովհաննեսի Մադոյանին և Գագիկ Հովհաննեսի Մադոյանին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 14-ի թիվ 7 որոշմամբ Եղիշե Չարենցի փողոց 7ա շենքի 7 բնակարանը հատկացվել է Վարդուհի Վանիկի Մադոյանի 8 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, ամուսնուն, ամուսնու հորը, ամուսնու մորը, ամուսնու քրոջը, 3 տղաներին և տրվել թիվ 7 միասնական օրդերը:

Քաղաքացիներ Վարդուհի Վանիկ Մադոյանը, Արմենակ Խաչիկի Մադոյանը, Հովհաննես Արմենակ Մադոյանը մահացել են (հիմք՝ ԱԱ 080657, ԱԱ 162223, ԲԱ 260460 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 14-ի թիվ 7 որոշմամբ տրված թիվ 7 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2023 թվականի հունիսի 7 -ի թիվ 230651065397 տեղեկանքը, «Նոր Անի» համատիրության 2023 թվականի հուլիսի 18 -ի «03» 001 տեղեկանքը, Գագիկ Հովհաննեսի Մադոյանի, Արմենակ Հովհաննեսի Մադոյանի անձնագրերի պատճենները, Արմենակ Հովհաննեսի Մադոյանի լիազորագիրը Գյումրի համայնքից ք. Գյումրի Չարենցի փողոց 7ա շենք թիվ 7 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, Թեյմինե Ալեքի Մադոյանի, Մարինե Արմենակի Մադոյանի, Մանուկ Հովհաննեսի Մադոյանի հայտարարությունը Գյումրի համայնքից Չարենցի փողոց 7ա

շենք թիվ 7 հասցեի բնակարանը նվեր ընդունելու հերաժարվելու վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հունիսի 20-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացիներ Արմենակ Հովհաննեսի Մաղոյանի և Գագիկ Հովհաննեսի Մաղոյանի լիազորված անձ՝ Էմմա Վաղինակի Վարդանյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրենց վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ե.Չարենցի փողոց 7ա շենքի թիվ 7 հասցեի 135.61 (մեկ հարյուր երեսունհինգ ամբողջ վաթսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 27072023-08-0028 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Եղիշե Չարենցի փողոց 7ա շենք թիվ 7 հասցեի բնակարանը 1991 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 14-ի թիվ 7 որոշում):

գ) Գյումրի քաղաքի Եղիշե Չարենցի փողոց 7ա շենքի 7 հասցեում հաշվառված բնակվում են՝ Թեյմիրե Ալեքի Մաղոյանը 1991 թվականից, Արմենակ Հովհաննեսի Մաղոյանը 2006 թվականից, Մանուկ Հովհաննեսի Մաղոյանը 2009 թվականից, Գագիկ Հովհաննեսի Մաղոյանը 2011 թվականից (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2023 թվականի հունիսի 7-ի թիվ 230651065397 տեղեկանք, «Նոր Անի» համատիրության 2023 թվականի հունիսի 18-ի «03» 001 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացիներ՝ Արմենակ Հովհաննեսի Մաղոյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ: Գագիկ Հովհաննեսի Մաղոյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի քաղաք Անի թաղամաս 13-րդ փողոց 7ա շենք 1 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք: Նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է Շիրակի մարզ, համայնք Գյումրի քաղաք Անի թաղամաս 13-րդ փողոց 7ա շենք 1 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի հունիսի 7-ի N ԱՏ-07062023-99-0083 տեղեկանք):

Դիմումին կից ներկայացվել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 14 -ի Շ-720/82 գրությունը, Գյումրի քաղաքի Մուշի անձնագրային խմբի 2023 թվականի հունվարի 11-ի N 8/63-25 գրությունը. «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի մարտի 27-ի տեղեկանքը, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 29-ի եզրակացությունը, ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի մարտի 9-ի տեղեկանքը, Ռուբեն Կամոյի Մելքոնյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Գ.Նժդեհի փողոց 10 շենք թիվ 53 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի ապրիլի 12-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 1-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Ռուբեն Կամոյի Մելքոնյանի լիազորված անձ՝

Բաբկեն Հայկի Կուրդինյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գ.Նժդեհի փողոց 10 շենք, թիվ 53 հասցեի 21.98 (քսանմեկ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը, սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին: 27.72 (քսանյոթ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քմ ընդհանուր մակերեսով տարածքները ընդհանուր օգտագործման են ք. Գյումրի, Գ.Նժդեհի փողոց 10 շենք, 57 հասցեով բնակարանի հետ (հիմք՝ N 1606-08-0034 վկայական):

բ) Գյումրու /Լենինականի/ Գ.Նժդեհի փողոցի թիվ 10 շենքի 1947 թ. բնակարանների բաշխման նյութերը չեն պահպանվել, հետևաբար վերոնշյալ շենքի թիվ 53 բնակարանի հատկացման վերաբերյալ տեղեկատվություն չկա (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 14-ի Շ-720/82 գրություն):

գ) Շիրակ Գյումրի Գ.Նժդեհի փողոց 10 շենք թիվ 53 հասցեում հաշվառված է քաղաքացի՝ Ռուբեն Կամոյի Մելքոնյանը 1971 թվականից (հիմք՝ Գյումրի քաղաքի անձնագրային խմբի 2023 թվականի հունվարի 11-ի N 8/63-25 գրություն, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2023 թվականի մարտի 27-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ քաղաքացի Ռուբեն Կամոյի Մելքոնյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրա կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ 2023 թվականի մարտի 14-ի N ԱՏ-14032023-99-0359 տեղեկանք):

ե) Գյումրու Գ.Նժդեհի 10 շենքի թիվ 53 բնակարանի կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի: Շենքի կրող համակարգը գտնվում է բավարար վիճակում (հիմք՝ Մուրադյան անհատական ձեռնարկության 2023 թվականի մարտի 29-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Ռուբեն Մելքոնյանը /Ք.Գյումրի, Գ.Նժդեհի փողոց 10 շենք, 53 բն./ Գյումրի» ցանցում բաժանորդ է 2002 թվականից (հիմք՝ «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի մարտի 9-ի տեղեկանք):

է) Քաղաքացի Ռուբեն Կամոյի Մելքոնյանի ընտանիքը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց

գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետի՝ օրենքով սահմանված կարգով վարձակալ ճանաչված չլինելու կամ այդ հանգամանքն ապացուցող փաստաթղթեր առկա չլինելու, առնվազն վերջին տասը տարիների ընթացքում բացահայտ, բարեխիղճ և անընդմեջ այդ բնակարանը տիրապետելու և օգտագործելու, սեփականության իրավունքով այլ բնակելի տուն կամ բնակարան չունենալու, Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, բնակարանն այլոց իրավունքներով ծանրաբեռնված չլինելու և օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ կիրառված չլինելու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Ռուբեն Կամոյի Մելքոնյանի լիազորված անձ՝ Բաբկեն Հայկի Կուրդինյանի դիմումը բավարարեց:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գ.Նժդեհի փողոց 10 շենք, թիվ 53 հասցեի 21.98 (քսանմեկ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Ռուբեն Կամոյի Մելքոնյանին

ծնված 1965 թվականին

որպես սեփականություն : 27.72 (քսանյոթ ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) քմ ընդհանուր մակերեսով տարածքները ընդհանուր օգտագործման են ք. Գյումրի, Գ.Նժդեհի փողոց 10 շենք, 57 հասցեով բնակարանի հետ:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Ռուբեն Կամոյի Մելքոնյանին :

3. Քաղաքացի՝ Ռուբեն Կամոյի Մելքոնյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Ռուբեն Կամոյի Մելքոնյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:



2023թ. ք. Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 03 » Օգոստոս 2023 թվական N 1926-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ
ԳՈՀԱՐԻԿ ԳՐԻՇԱՅԻ ՈՒՋՈՒՆՅԱՆԻՆ, ՄԿՐՏԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ
ՈՒՋՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԱՆ ՄԿՐՏԻՉԻ ՈՒՋՈՒՆՅԱՆԻՆ
ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լ.ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Գոհարիկ Գրիշայի Ուզունյանը (անձնագիր՝ AV0288321, տրված՝ 28.06.22թ., 064-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Կազաչի Պոստ թաղամաս, 198 շենք, թիվ 3 բնակարան հասցեում), (այսուհետ նաև վարչական ակտի հասցեատեր), 2023 թվականի հունիսի 20-ին դիմում է ներկայացրել Գյումրու համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Կազաչի Պոստ, 198 դոս, թիվ 3 հասցեով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին, որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

Գյումրու քաղաքապետի 2005թվականի հուլիսի 20-ի թիվ 1479 որոշմամբ Գյումրի համայնքի Կազաչի պոստ, 198 շենք, թիվ 3 հասցեի երկու սենյականոց բնակարանը հատկացվել է քաղաքացի Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանի հինգ անձից բաղկացած ընտանիքին (իրեն, կնոջը և երեք երեխաներին) և տրվել է թիվ 3 միասնական օրդեր:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 20.07.2005թվականի թիվ 1479 որոշմամբ տրված թիվ 3 միասնական օրդերը, Գյումրի քաղաքի Կոմայրիի անձնագրային բաժանմունքի 31.05.2023թվականի №8/62-940 գրությունը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 15.06.2023 թվականի տեղեկանքը, Գոհարիկ Գրիշայի Ուզունյանի և Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանի անձնագրերի ու ամուսնության վկայականների պատճենները, Արման Մկրտիչի Ուզունյանի նույնականացման քարտի պատճենը, Անժելա Մկրտիչի Ուզունյանի դիմումը և Մանուշակ Մկրտիչի Սրտաշյանի հայտարարությունը Գյումրի քաղաքի Կազաչի պոստ, 198 շենք, թիվ 3 հասցեի բնակարանը Գյումրի համայնքից նվեր ընդունելուց հրաժարվելու վերաբերյալ, Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանի լիազորագիրը տրված Գոհարիկ Գրիշայի Ուզունյանին, Մուրադ Տիգրանյան ԱԶ-ի 16.05.2023թվականին տրված եզրակացությունը Գյումրի

քաղաքի Կազաչի պոստ, 198 շենք, թիվ 3 հասցեի բնակարանի տեխնիկական վիճակի վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի №46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի հունիսի 20-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2023 թվականի օգոստոսի 1-ը, դիմումատունն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Գոհարիկ Գրիշայի Ուզունյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Գյումրի համայնքի Կազաչի Պոստ 198 դոս, թիվ 3 հասցեի 67.62(վաթսույոթ ամբողջ, վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ 1147093 վկայական.):

բ) Քաղաքացիներ՝ Գոհարիկ Գրիշայի Ուզունյանը 03.02.2006 թվականից, Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանը 03.02.2006 թվականից և Արման Մկրտիչի Ուզունյանը 12.03.2011 թվականից հաշվառված բնակվում են Գյումրի քաղաքի Կազաչի Պոստ թաղամաս, 198 շենք, թիվ 3 հասցեի բնակարանում (հիմք՝ Գյումրի քաղաքի Կոմայրիի անձնագրային բաժանմունքի 31.05.2023 թվականի №8/62-940 գրություն և «Գյումրի Կենտրոն» համատիրության 15.06.2023 թվականի տեղեկանք):

գ) Գյումրի քաղաքի Կազաչի Պոստ 198 շենքի վնասվածությունը գնահատվում է **երկրորդ** աստիճանի, տեխնիկական վիճակը՝ **բավարար** (հիմք՝ Մուրադ Տիգրանյան ԱԶ-ի 16.05.2023 թվականի եզրակացություն):

դ) Քաղաքացիներ՝ Գոհարիկ Գրիշայի Ուզունյանի, Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանի և Արման Մկրտիչի Ուզունյանի անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր Հայաստանի Հանրապետության տարածքում վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կատարված չէ, (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի 31/03/2023 թ. №ՍՏ-31032023-99-0368, 23/05/2023 թ. №ՍՏ-23052023-99-0310 և 26/06/2023 թ. №ՍՏ-26062023-99-0222 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Գոհարիկ Գրիշայի Ուզունյանի ընտանիքը Գյումրի համայնքի Կազաչի Պոստ 198 դոս, թիվ 3 հասցեի բնակարանը վարձակալել է 2005 թվականից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009

թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում են:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունքը կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009

թվականի նոյեմբերի 26-ի №46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Գոհարիկ Գրիշայի Ուզունյանի դիմումը բավարարել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Գյումրի համայնքի Կազաչի Պոստ 198 դոս, թիվ 3 հասցեի 67.62(վաթսույնյոթ ամբողջ, վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

- | | |
|----------------------------------|----------------------|
| 1) Գոհարիկ Գրիշայի Ուզունյանին | ծնված 1973 թվականին, |
| 2) Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանին | ծնված 1968 թվականին, |
| 3) Արման Մկրտիչի Ուզունյանին | ծնված 2002 թվականին, |

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ Գոհարիկ Գրիշայի Ուզունյանին, Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանին և Արման Մկրտիչի Ուզունյանին:

3. Քաղաքացիներ Գոհարիկ Գրիշայի Ուզունյանին, Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանին և Արման Մկրտիչի Ուզունյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գոհարիկ Գրիշայի Ուզունյանին, Մկրտիչ Հովհաննեսի Ուզունյանին և Արման Մկրտիչի Ուզունյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2023 թիվ Գյումրի համայնք



Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 02 » Փրկարար 2023 թվականի N 1925 Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶՔԱՂԵՑՐԱԾ 416.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 123.55 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (96.06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 416.01 (չորս հարյուր տասնվեց ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 123.55 (հարյուր քսաներեք ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (96.06 (իննսունվեց ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 416.01 (չորս հարյուր տասնվեց ամբողջ մեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 123.55 (հարյուր քսաներեք ամբողջ հիսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (96.06 (իննսունվեց ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Կատարինե Ռազմիկի Աթանեսյանին, Սյուզաննա Մամիկոնի Աթանեսյանին և Գուրգեն Մամիկոնի Աթանեսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



2023թ. ք.Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 02 » Օգոստոսի 2023 թվականի N 1924-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐ-ԳԱՐՐԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 178.18 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 91.48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (75.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի հարևանությամբ ինքնական զբաղեցրած 178.18 (հարյուր յոթանասունութ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնական կառուցված է 91.48 (իննսունմեկ ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (75.26 (յոթանասունհինգ ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնական կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնական կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի հարևանությամբ ինքնական զբաղեցրած 178.18 (հարյուր յոթանասունութ ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնական կառուցված 91.48 (իննսունմեկ ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (75.26 (յոթանասունհինգ ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ոտղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Մարատ Կոլյայի Հակոբյանին, Ադրինե Սիրեկանի Հակոբյանին, Տիգրան Մարատի Հակոբյանին և Հասմիկ Հարությունի Հակոբյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքացիության և ճարտարապետության բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



2023թ. ք.Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Թաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 02 » Գրայնաբ 2023 թվականի N 19231

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 127.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 76.94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (66.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 127.5 (հարյուր քսանյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 76.94 (յոթանասունվեց ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (66.26 (վաթսունվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 127.5 (հարյուր քսանյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 76.94 (յոթանասունվեց ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (66.26 (վաթսունվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Բելա Հարությունի Հովսեփյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և ճարտարապետության բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:



2023թ. ք.Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑԻ 62 ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ
ՀԱՄԱՅԱՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՋԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

«02» «Փրւպրիլ» 2023թվական N 1922 - Ա

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի 62 շենքի հարակից տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից (հաշվառման հասցեն՝ ք. Երևան, Մ. Ավետիսյան 2-րդ փ., 17 ա շ., բն.14, փաստացի՝ ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ փ. 62 շ. բն 14) առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, քարե շարվածքով իրականացված շինության կառուցման (այսուհետ՝ ինքնակամ կառույց) շինարարական աշխատանքներ իրականացնելու իրավախախտման փաստի կապակցությամբ՝ հիմք ընդունելով վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշները, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի աշխատակիցների կողմից վերջինիս նկատմամբ 07.06.2023 թվականին կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն, որի հիման վրա Գյումրի համայնքի ղեկավարի 24.07.2023թվականի «Վարչական տույժ նշանակելու մասին» N 1831-Ա որոշմամբ քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանն ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Հաշվի առնելով նշված փաստական հանգամանքը և համաձայն «Վաչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հարուցվել է համապատասխան վարչական վարույթ՝ Գյումրի քաղաքի Խրիմյան

Հայրիկ փողոցի 62 շենքի հարակից տարածքում քաղաքացի՝ Արմեն Խաչիկի Գաբրիելյանի կողմից առանց հողօգտագործման իրավունքի օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու և այդ հողամասում կառուցված ինքնակամ կառույցը քանդելու համար :

Վարչական վարույթի ընթացքում լսումներ չեն անցկացվել՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետով սահմանված կարգավորումները:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

ա. Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի 62 շենքի հարակից տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության իրականացվել են շինության կառուցման շինարարական աշխատանքներ, բացի այդ տվյալ հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք.

բ. վերոնշյալ ինքնակամ շինությամբ փաստացի ծանրաբեռնված է Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ կառույցից.

գ. առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերոնշյալ հասցեի կառույցը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան շինարարական հրապարակով կահավորված չէ, այն որևէ կերպ սահմանազատված չէ, ինչից բխում է որ շինարարության իրականացումը կարող է վտանգ ներկայացնել անձանց կյանքին և առողջությանը, այսինքն՝ վարչական ակտն ընդունելու հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացմանը:

3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումներ.

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող կառավարության որոշմամբ (այսուհետ սույն հոդվածում նաև՝ Կառավարության որոշում) սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները: Կառավարության կողմից կարող են սահմանվել սույն մասով նախատեսված ինքնակամ կառույցների (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածների) օրինականացման առանձնահատկություններ:

Ըստ այդմ, իրավահարաբերության ծագման պահին գործող քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի խմբագրության համաձայն, ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական

խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքեր, շինություններ կամ այլ կառույցներ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը:

Վերը նշված հոդվածի 5-րդ մասի համաձայն, ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը: Ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Իրավահարաբերության պահին գործող ՀՀ կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման խմբագրության 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

ա) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

բ) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնակամ կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե՝ դրանք չեն բավարարում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

ՀՀ կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը հողամասերն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքն է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ: Հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Իրավահարաբերության ծագման պահին գործող «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի խմբագրության 5-րդ մասի համաձայն, Համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի համաձայն, համայնքի ղեկավարը քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները՝ 8) կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Նույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի համաձայն, լսումներ չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարո է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման:

Նույն օրենքի 60-րդ հոդվածի համաձայն, գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 44-րդ հոդվածի 2-րդ մասի, իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 35-րդ, 50-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի, 55-րդ, 58-րդ հոդվածի 1-ին կետի, 59-րդ, 60-րդ, 69-րդ, 70-րդ, 71-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջները՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Չօրինականացնել Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի 62 շենքի հարակից տարածքում, առանց հողօգտագործման իրավունքի օգտագործվող,

համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ապօրինի կառուցված ինքնակամ շինությունը:

2. Հանձնարարել Գյումրի համայնքի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնին և Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկին ապամոնտաժել վերոնշյալ հասցեում ապօրինի կառուցված շինությունը և անօրինական տիրապետումից ազատել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գյումրի քաղաքի վարչության պետին՝ Գյումրու համայնքպետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:
4. Սույն որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ կառույցն իրականացրած անձից:
5. Որոշման օրինակը երեք օրվա ընթացքում ուղարկել քաղաքացի Արմեն Խաչիկի Գաբրիելյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ ծանուցման պահից:
7. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:



Վ. Սամսոնյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Կարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ժաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 01 » օգոստոսի 2023 թվականի N 1921Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 77 ՀԱՍՑԵԻ ԲԱԶՄԱՐՆԱԿԱՐԱՆ ԾԵՆՔԻ N 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ 1 ՊԱՏՈՒՀԱՆԸ ԴՌԱՆ ՁԵՎԱՓՈԽԵԼՈՒ, ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՎ ԹԵՔԱՀԱՐԹԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԹՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 77 հասցեի բազմաբնակարան շենքի N 2 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գոռ Հովհաննեսի Բարսեղյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 10032022-08-0005 վկայական):

Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 77/3 հասցեի 8.0 (ութ) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 30032023-08-0018 վկայական):

Քաղաքացի Գոռ Հովհաննեսի Բարսեղյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 77 հասցեի բազմաբնակարան շենքի N 2 հասցեի բնակարանի 1 (մեկ) պատուհանը դռան ձևափոխելու, ինչպես նաև աստիճաններ ու թեքահարթակ կառուցելու նպատակով Ղանդիլյան փողոցի N 77/3 հասցեի 8.0 (ութ) քառակուսի մետր մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 48-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Գոռ Հովհաննեսի Բարսեղյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 17-ին N 6728 թվագրմամբ):

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Գոռ Հովհաննեսի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 77 հասցեի բազմաբնակարան շենքի N 2 հասցեի բնակարանի 1 (մեկ) պատուհանը ձևափոխել դռան:
2. Քաղաքացի Գոռ Հովհաննեսի Բարսեղյանին՝ գործող նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 77/3 հասցեի 8.0 (ութ) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 17600 (տասնյոթ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
4. Պարտավորեցնել քաղաքացի Գոռ Հովհաննեսի Բարսեղյանին.
 - 1) Աստիճաններ և թեքահարթակ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:
 - 2) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլություն:
 - 3) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:

5. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել քաղաքացի Գոռ Հովհաննեսի Բարսեղյանի միջոցների հաշվին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գոռ Հովհաննեսի Բարսեղյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 01 » օգոստոսի 2023 թվականի N 1920-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՁՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ
N 209 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 7.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 0.04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Խաչիկ Սուրենի Կարապետյանին և Նելլի Սաշիկի Տալետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 11042012-08-0034 վկայական) Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 209 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից 7.4 (յոթ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցվել է 0.04 (զրո ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպ, որը տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Խաչիկ Սուրենի Կարապետյանը և Նելլի Սաշիկի Տալետյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերմիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունները Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2022W0DV35)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մազմանյան փողոցի N 209 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից 7.4 (յոթ ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 0.04 (զրո ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 94282 (իննսունչորս հազար երկու հարյուր ութսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացիներ Խաչիկ Սուրենի Կարապետյանին և Նելլի Սաշիկի Տալետյանին:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 01 » Փետրվար 2023 թվականի N 199-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ
